ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(Մահվան 100-ամյակի առթիվ)

ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Այս տարի լրացավ XIX դ. հայ մշակույթի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի մահվան հարյուր տարին: Ալիշանը ծնվել է 1820 թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսում՝ Պետրոս-Մարգար և Թագուհի Ալիշանյանների ընտանիքում: Գրոց անունը Քերովբե է: 1832 թ. մայիսի 9-ին իր կրտսեր եղբոր՝ Սերովբեի (նշանավոր հնագետ) և մի քանի ուրիշ հայ պատանիների հետ, Մխիթարյան միաբանության նշանավոր գիտնական հայրերից մեկի՝ Մկրտիչ Ավգերյանի առաջնորդությամբ Կ. Պոլսից ուղևորվում է դեպի Ս. Ղազար՝ հայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը: Նորընծայարանում չորս տարի սովորելուց հետո, 1836 թ. կատարվում է Ալիշանի փիլոնառությունը և այդ կապակցությամբ ստանում է հայ եկեղեցու սրբերից՝ Ղևոնդ Երեցի անունը:

Ալիշանը ապրեց 82 տարի: «Սիմէոն ծերունիին պես պիտի ապրիմ ու պիտի սպասեմ...»,– ասել է Հ. Ալիշանը միաբանության անդամներից մեկին: Եվ սպասեց նա, սպասեց երկար, բայց Հայ Մեսիան չեկավ: «Երգեց, աշխատեցավ եւ այն մեսիաին տենչով հալեցաւ, մաշեցաւ, սպասեց եւ ծերացաւ, ոգեառ ոգին ալ սպասեց, բայց չիտաբվեցաւ...»[1],– գրում է Ալիշանի կենսագիր Ա. Երեմյանը:

Ալիշանը մահացավ 1901 թ. նոյեմբերի 22-ին: Նրա մահը վերածվեց համազգային սգի: Մի պահ մոռացվեց նրա եկեղեցական պատկանելությունը: Մահախոսական հոդվածներ հրապարակեցին հայկական բոլոր լրագրերն ու ամսագրերը: 1901 թ. իր համարներից մեկում «Մշակը» գրում է. «...Հ. Ալիշանը ամբողջ ազգին է պատկանում, որովհետև նրան սիրելու համար չէր պետք է լինել լուսավորչական, կաթոլիկ կամ բողոքական, այլ միայն հայ»[2], միաժամանակ պահանջում է, որ նրա մահվան կապակցությամբ հոգեհանգիստ արվի հայկական բոլոր եկեղեցիներում: Իհարկե, հայկական բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ չտրվեց: Նույնիսկ Հովհաննես Թումանյանի և առաջադեմ մյուս մտավորականների միջամտությունից հետո հոգեհանգիստ կատարվեց միայն Թիֆլիսի հայ կաթոլիկ եկեղեցում. հոգեհանգստին ներկա էին ազգային բոլոր երևելիները, նրանց թվում էր նաև վիրահայոց թեմի առաջնորդը:

Հայ հասարակությանը Ղ. Ալիշանը ծանոթ է որպես բանաստեղծ, ում ժողովուրդը «Ավարայրի բլբուլ» և «քաղցրանվագ Նահապետ» կոչումն է տվել և ում բանաստեղծական արվեստի մասին դեռևս 1864 թ. Մ. Նալբանդյանը գրում էր, որ «չափաբերական քերթվածոց մէջ արժանավոր

---

1 Ս. Ե ր ե մ ե ա ն. Կենսագրութիւն Հ. Ալիշանի. Վենետիկ, 1902, էջ 208:

2 «Մշակ», 1901, № 252:

վարդապետը ախոյան չունի»[3], իսկ Ա.Զոպանյանը գրում էր, որ «Ալիշանի բանաստեղծութեանց մեջ կան էջեր որ, մտածումին խորութեամբն ու ձեւին բարդ ու նուրբ գեղեցկութեամբը, Հիւկոյի կամ Պայրընի հավաքածոյի մը մեջ պիտի կրնային տեղ ունենալ»[4]: Որպես բանաստեղծ Ալիշանը հայտնի էր իր «Նուագներ»-ով, հատկապես «Հայրունի» հատորյակով, որը Ս. Երեմյանի բնութագրմամբ «մեր ազգային խմբերգին երգարանն է...»: Ալիշանը հայտնի է նաև որպես բազմագիտակ պատմագիր և աշխարհագիր, հատկապես իր «Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց» (1881 թ.), «Սիսուան, համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ» (1885 թ.), «Այրարատ» (1890 թ.), «Սիսական. տեղագրութիւն Սիւնաց աշխարհի» (1893 թ.) և արժեքավոր այլ հետազոտություններով, որոնց մասին Ալ. Երիցյանը գրում է. «Հ. Ալիշանի քնարերգական նուագները չեն միայն, որ լուսոյ ճառագայթների նման թափանցում են մեր հոգւոյն մեջ, այլ եւ նորա պատմական-հետազոտական աշխատութիւնները, երբեմն 'ի վնաս նոյն իսկ առարկայի գիտական ոճին, շնչում են անպաճոյճ, բայց պարզ, եռող, մաքուր բոցով եւ ջերմացնում են սառած սրտերը»: Շարունակելով իր միտքը Երիցյանը գրում է, որ եթե անգամ Ալիշանը «ընդհանուր մարդկութեան համար համահաւասար ընդունուած մի գերբնական շնորհք չունի իր մեջ», ապա «հայկական մտաւոր կեանքի համեստ ասպարեզում նա մի բարոյական ուժ է»[5]:

XIX գ. երկրորդ կեսին ինչպես «տաճկահայ», այնպես էլ «ռուսահայ» հասարակության մեջ հայ մտավորականությունը «իրեն նպատակ ուներ բուժել հայ ցեղը ահաւոր հիվանդութենէ մը, որ անոր ուղեծուծին մեջ մտած էր»: Այդ «ահաւոր հիվանդութիւնը», որ Ա. Զոպանյանը «ըստրկախտ»[6] է անվանում, բուժելու առավել արդյունավետ միջոցներից մեկը համարվում էր ժողովրդին իր հերոսական անցյալի և իր քաջակորով նախնիների, ինչպես նաև եկեղեցու նահատակների գործունեության հետ ծանոթացնելը: Դա լավ էին գիտակցում նաև Մխիթարյան միաբանության անդամները, որոնք հետևում էին իրենց հանճարեղ առաջնորդի սկզբունքին. «Պատմութիւն ի հայս՝ օգնեսցես զմեզ»[7]:

Յուրաքանչյուր ժողովուրդ իր ներկան, առավել ևս իր ապագան, կառուցում է անցյալի հիմքի վրա: «Պատմությունը մարդկային գործերի մեջ իմաստության գլխավոր ուղին է»,– ասում է XX դ. խոշոր պատմաբաններից մեկը՝ և նա իրավացի է, որովհետև ո՛չ ներկան կարող է պտուղ տալ և ո՛չ էլ ապագան կարող է պտուղ խոստանալ, եթե դրանց արմատները չեն սնվում պատմության ակունքներից:

---

3 Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Երկեր. Երևան, 1979, էջ 486:

4 Ա. Զ ո պ ա ն յ ա ն. Դեմքեր. Փարիզ, 1924, էջ 51:

5 Ա լ. Ե ր ի ց ե ա ն. Վենետիկի Մխիթարեանք. Թիֆլիս, 1883, էջ 131:

6 Ա. Զ ո պ ա ն ե ա ն. Մկրտիչ Պեշիկթաշլյանի կեանքն ու գործը. Փարիզ, 1907, էջ 9:

7 Հ. վ. Թ ո ր ո ս ե ա ն. Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ. Վենետիկ,1932, էջ 252:

8 Տե՛ս И. С. К о н. Философский идеализм и кризис буржуазной исторической мысли. М., 1957, с. 403.

Ալիշանը նույնպես գիմում է պատմությանը, երգում է հայ ժողովրդի հերոսական անցյալը, համոզված, որ յուրաքանչյուր ժողովրդի համար նրա պատմությունը ոչ միայն իրագարձությունների պարզ արձանագրություն է, այլև՝ կենսափիլիսոփայություն, որն օրինակների միջոցով կրթում և դաստիարակում է ժողովրդին:

Պատմության թատերարեմ իջած երիտասարդ սերունդը կարիք ուներ բարձր գաղափարների ու վեհ իդեալների՝ Հայրենիքի, Ազատության, Անկախության: Նա որոնում էր հերոսացման ճանապարհը... Անհրաժեշտ էր ցույց տալ այդ ճանապարհը, և դա կարող էր անել միայն պատմությունը: Եվ Ալիշանը գիմում է պատմությանը: Նրա նպատակը ոչ թե սրբացումն է այն ամենի, ինչը որ հայկական է, ունի հայկական ծագում և դալիս է հնից, ինչպես ենթադրում է Հ.Գաբրիելյանը[9], այլ «սթափեցնել, արթնցնել հայը իր դարաւոր մահաթմբիր խոր քունեն, ցուցնել անոր թէ նա երբեմն մեծ եղած է, հավասար ուրիշ մեծ ազգաց, որպեսզի գիտակցութիւնն ունենալով իր երբեմնի վիճակին, ցնցուի, թռիչներ առնու իր այն ստոր վիճակեն դեպ ի կանգնում, դեպ ի զարգացում յառաջագիմելու»[10]:

Ալիշանը հայտնի է նաև որպես հմուտ մանկավարժ[11] և «անզուսպ հայրենասեր» կամ, ինչպես նրան բնութագրում է գրաբարյան մեր վերջին հսկան՝ Արսեն Բագրատունին, Ալիշանը «մոգ մ՛էր, Հայաստանի աստղը փնտրող մոդ մը»[12]:

Բայց, եթե մենք այսօր կարող ենք խոսել Ալիշանի մասին որպես բանաստեղծի, որպես պատմագիր-աշխարհագրի, որպես հմուտ մանկավարժի և աստվածավախ հոգևորականի՝ շնորհիվ Ս. Երեմյանի, Ա. Տերտերյանի, Ս. Շտիկյանի, Ա. Սարդսյանի, Բ. Սարգսյանի, Ա. Զոպանյանի, Կ. Քիպարյանի, Ս. Ճեմճեմյանի և ուրիշների աշխատությունների, ապա Ալիշան իմաստասերն ու Ալիշան բարոյախոսն այսօր էլ դեռևս մնում է «համեստ մանիշակ մը՝ ծածկուած իր փիլոնին տերևին տակը»[13], չբացահայտված և չճանաչված, դրա պատճառները և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ: Պետք է խոստովանել, որ դրանում մեղավոր են նաև հայ փիլիսոփայության պատմության ներկայացուցիչները: Մենք համակարծիք ենք «Ձայն Հայրենեաց»-ի հեղինակի հետ, որը դեռևս 1901 թ. հավատացած էր, որ «Մի օր այդ հայրենիքը (հայ հայրենիքը – Յու. Հ.) աւելի երջանիկ օրերու մեջ՝ պիտի յիշե իր յոգնաւաստակ զաւակներու անունները...»[14]: Անգամ այնպիսի մեծավաստակ դիտնականները, ինչպիսիք են Հ. Գաբրիելյանն ու Վ. Զալոյանը, չկարողացան ճիշտ դնահատել Մխիթարյանների իրական նշանակությունը հայ մշակույթի պատմության մեջ: Հ. Գաբրիելյանը Մխիթարյաններին մեղադրում է քննադատական մտքի զարգացմանը խոչընդ-

---

9 Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն. հ. 2, Երևան, 1958, էջ 346:*

10 Ա. Ղ ա զ ի կ ե ա ն. *Համառոտ գրական պատմութիւն Նշանավոր Մխիթարեան հարց (Մխիթարեան հոբելեան) (1701–1901). Վենետիկ, 1901, էջ 80:*

11 Հ. Ս ա հ ա կ Ճ ե մ ճ ե մ ե ա ն. *Հ. Ղևոնդ Ալիշան. Տեսուչ Փարիզի Մուրատեան վարժարանի, 1858-1861. Վենետիկ, 1980:*

12 Ս. Ե ր ե մ ե ա ն. *Նշվ. աշխ., էջ 184:*

13 *Նույն տեղում, էջ 180:*

14 *«Ձայն Հայրենեաց», 1901, Թիֆլիս, №112:*

դոտելու և հինը փոխելու դեմ դուրս գալու, հայերի պատմական դերը չափազանցելու և առավելությունները գովերգելու մեջ, որով և, ըստ Գաբրիելյանի, Մխիթարյաններն ընկել են ազգային սնապարծության մեջ, հոգեկան սնունդ տալով «նացիոնալիզմին» և «կոնսերվատիզմին»[15]:

Միակ շեղումը խորհրդային տարիներին կատարեց Ալ. Թևոսյանը՝ անդրադառնալով միաբանության «հսկաներից» մեկի՝ Արսեն Բագրատունու[16] փիլիսոփայության ուսումնասիրությանը: Այդ շրջանում, իհարկե, գրականագիտական աշխատություններ հրատարակվեցին, ընդ որում նաև Ալիշանի մասին, որոնցից հատկապես կուզենայի նշել ակադեմիկոս Արսեն Տերտերյանի և Սուրեն Շտիկյանի աշխատությունները[17], սակայն Մխիթարյանների փիլիսոփայական հայացքներին անդրադարձ չկատարվեց: Դա հաճախ փորձում են բացատրել նրանով, որ իբր XIX դ. հայ իրականության մեջ «զուտ փիլիսոփայական բնույթի» աշխատությունները քիչ են[18]: Բնականաբար, հարց է ծագում, ասվածը վերարերո՞ւմ է արդյոք Ալիշանին և կարելի՞ է արդյոք նրան ուսումնասիրել որպես փիլիսոփայի...

Ղ. Ալիշանի աշխատությունների քննական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ այն չափորոշիչները, որոնցով ղեկավարվելով մենք փիլիսոփաներ ենք համարում Պյութագորասին, Պլատոնին, Ցիցերոնին, Ե. Կողբացուն, Ա. Շիրակացուն, Հ. Սարկավագին և բոլոր նրանց, ովքեր փառաբանվել են իրենց իմաստությամբ, կրթվածությամբ և ապրելու արվեստով, նույն չափորոշիչներով՝ փիլիսոփա է նաև Ալիշանը: Նա փիլիսոփա է նաև ժամանակակից չափորոշիչներով, այն է՝ երևույթների վերլուծության նրբությամբ և խորությամբ, մոտեցումների համընդհանրությամբ, դատողությունների տրամաբանությամբ, վերջապես, նաև աշխարհընկալման յուրահատկությամբ: Այո, Ղ. Ալիշանը փիլիսոփա է և միանգամայն ինքնատիպ փիլիսոփա, որի վկայությունն են նրա մեծ և փոքր կտավի բազմաթիվ աշխատությունները, առաջին հերթին նրա «Ընդ եղեւնեաւ»ը (1874 թ.)՝ գրված գրաբարով, որը միայն 1931 թ. Վ. Հովհաննիսյանը թարգմանեց արևմտահայերեն. «Եղեւինին տակ: Խորհրդածութիւն մենաւոր բնութեան մեջ»: Այս թարգմանությունը հետագայում Ա. Շտիկյանը զետեղեց Ղ. Ալիշանի «Երկեր»-ի[19] մեջ: Իրենց բնույթով փիլիսոփայական աշխատություններ են նաև «Հրահանգ, զբոսանք և սփոփանք հասարակաց»[20], «Ծանիր զքեզ»[21], «Ազգային պակասութեանց և կատարելութեանց

15 Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 346:

16 Ա լ. Թ և ո ս յ ա ն. Արսեն Բագրատունին որպես փիլիսոփա.– XIX դ. հայ փիլիսոփայական միտքը. Երևան, 1969, էջ 55–174:

17 Ա. Տ ե ր տ ե ր յ ա ն. Ալիշանը և հայրենասիրությունը (Հայ կլասիկներ). Երևան, 1944: Ս. Շ տ ի կ յ ա ն. Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը. Երևան, 1967:

18 Տես՝ Я. Х а ч и к я н. Об источниках армянской философской мысли XIX в.– Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում. Երևան, 1998, էջ 66-81:

19 Ղ. Ա լ ի շ ա ն. Երկեր. Երևան, 1981, էջ 297–351:

20 Նույն տեղում, էջ 203–222:

21 Նույն տեղում, էջ 129–135:

վրայ»[22], «Ազգային հատուկ դաստիարակություն»[23], «Ազգասիրություն»[24], «Յուշիկք Հայրենեաց Հայոց» աշխատության ընդարձակ «Առաջաբանն» ու «Վերջաբանը»[25], «Ուսումն հայրենեաց. բանախոսութիւն Հայաստանի»[26], նշանավոր «Ճառը» և բազմաթիվ այլ հոդվածներ ու աշխատություններ:

Իմաստասիրական և բարոյախոսական բազմաթիվ աշխատություններ և խորհրդածություններ Ալիշանի մահվանից հետո մնացել են անտիպ, որոնց հրատարակման ազգօգուտ գործը մեծ պատասխանատվությամբ ձեռնարկել են միաբանության անդամները: «Բազմավեպի» 1909 թ. երկրորդ համարից սկսած շարունակաբար հրատարակվեցին Ալիշանի «Առժամայն մտաղդեցութիւնք» խորագիրը կրող իմաստասիրական խորհրդածությունները: Այդ անտիպ գրությունները, որոնք Ս.Երեմյանի վկայությամբ կազմում են մոտ 100 «փոքրագիր էջեր», ունեն նաև մեկ այլ խորագիր՝ «Օրագիր առժամայն ազդմանց մտաց եւ սրտի»: Այդ խորհրգածությունները սկսվում են 1841 թ. և որոշ ընդհատումներով շարունակվում են մինչև 1855 թ.[27]: Սրանք փիլիսոփայական խորհրգածություններ են Կյանքի և Մահվան, Գեղեցիկի և Բարու, Ճանաչողության և Ինքնակատարելության, Սիրո և Բարեկամության, Աղդի և Ազգասիրության, Հայրենիքի և Հայրենասիրության, Հավերժության և Անմահության, մարդկային արատների և դրանց հաղթահարման վերաբերյալ, որոնք ունեն նաև խիստ ընդդծված բարոյագիտական բնույթ:

Ալիշանը թողել է բազմաթիվ անտիպ աշխատություններ և հարուստ արխիվ, որտեղ քիչ չեն նաև փիլիսոփայական-բարոյագիտական բնույթի աշխատանքները: Հուսով ենք, որ օրերից մի օր հայ հասարակությունը հնարավորություն կունենա ծանոթանալու նաև այդ աշխատությունների հետ:

«Ընդ եղեւնեաւ»-ի առաջաբանում Վ. Հովհաննիսյանը գրում է. «Շատերը լսած են և քիչերը թերևս ճաշակած Ալիշանի այս փոքրիկ, բայց ոսկեղնիկ դլուխգործոց գրքոյկը: Տաք և հոգեխոով խոսակցութիւն մը բնութեան և բանաստեղծին միջև, ու Նահապետին ալեկոծված ներաշխարհն ի հայտ կուդա իր ամբողջ տենչանքներով եւ բարդութիւններով... Ընդ եղեւնեաւը երկնքի խորութիւնն ունի, հոդւոյ աղաղակը և ճշմարտութեան վեպն է բնութեան մեջ դրված»[28]:

«Ընդ եղեւնեաւ»-ը գրված է միջնադարյան իմաստասիրական գրականության սկզբունքներով, փիլիսոփայական մենախոսության ձևով: Այս սկզբունքը մշակվել է դեռևս Օդոստինոսի, Բոեցիոսի, Անսելմի, Աբելյարի, Նարեկացու և այլ մտածողների մոտ: «Ընդ եղեւնեաւ»-ը խոստովանութ-

22 Նույն տեղում, էջ 170–176:

23 Նույն տեղում, էջ 156–165:

24 Նույն տեղում, էջ 176–181:

25 Հ. Ղ. Մ. Ա լ ի շ ա ն. Յուշիկք Հայրենեաց Հայոց. Հ. Ա. Վենետիկ, 1869, էջ 1-98, Հ. Բ, 1870, էջ 567–572:

26 «Բազմավեպ», 1861, էջ 311-325, 347-357:

27 «Բազմավեպ», 1909, էջ 109:

28 Ղ. Ա լ ի շ ա ն. Եղեւինին տակ: Խորհրդածութիւն մենաւոր բնութեան մեջ. Վենետիկ, 1931, էջ 5:

յուն-մենախոսություն է, բարոյական մաքրման և հրապարակային զղջումի գրականության հրաշալի օրինակ, որի նպատակը բարոյական կատարելագործումն է: Այստեղ հեղինակը իմաստասիրաբար խորհրդածում է Բնության, Կյանքի ու Մահվան, Մարդու և հասարակության, Տիեզերական արարչագործության ու կամքի ազատության հարցերի շուրջը...

Ալիշանի իմաստասիրությունը բազմաշերտ է: Հետևաբար, նրա փիլիսոփայական աշխարհայացքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է քննել այն իր բոլոր շերտերի մեջ: Տիեզերքի, Բնության, Մարդու, ինչպես նաև, Կյանքի և Մահվան, Հոգու և Անմահության հարցերի շուրջը խորհրդածելիս Ալիշանը հանդես է գալիս որպես կրոնափիլիսոփա և աստվածաբան: Մինչդեռ հասարակական երևույթների, Դաստիարակության, Բնության և Հասարակության, Ազգային խնդիրների շուրջը խոսելիս Ալիշանի փիլիսոփայության հիմքում դիտական աշխարհայացքն է, միանգամայն հակադիր աստվածաբանական իր ըմբռնումներին:

Ալիշանի փիլիսոփայական աշխարհայացքը մի կողմից արդյունք է Մխիթարյան միաբանության հոգևոր մթնոլորտի, միաբանության կամարների տակ թևածող ընդհանուր Ոգու, իսկ մյուս կողմից՝ եվրոպական և ազգային հասարակական-քաղաքական իրադարձությունների: Նա մի կողմից ապստամբ է ու խռովարար, որ Վենետիկի իրադարձություններով ոգևորված «Ի զէ՛ն ի վրէ՛ժ» է կոչում հայ երիտասարդությանը, իսկ մյուս կողմից՝ հաշտության և հնազանդության կոչեր է անում: Հատկապես կյանքի վերջին տարիներին, նա, ինչպես վկայում է ժամանակակիցներից Թադևոս Թոմաճանը, «Հաճախ խուցը քաշված կուլար՝ ինքզինք պատճառ նկատելով ազգին գլխուն եկած այդ մեծ աղետներուն»[29]:

Այս միջավայրն ու իրադարձությունները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել Ալիշանի փիլիսոփայական աշխարհայացքի վրա, որովհետև, վերջին հաշվով յուրաքանչյուր փիլիսոփայական տեսություն, ինչպես ասում է Ֆիխտեն, ավելին չէ, քան է իր հեղինակը: Հետևաբար, հոգևորական միջավայրում ձևավորված Ալիշանի փիլիսոփայությունը չէր կարող լինել այլ բան, քան՝ կրոնափիլիսոփայություն, որովհետև, ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Ա. Տերտերյանը, «վանքի խուցը... սոսկ ֆիզիկական, աշխարհագրական հասկացություն չէ, այլ նաև որոշակի մտայնություն, որոշակի գրական ուղղություն, մի հայտնի ոճ և այդ բոլորով հանդերձ՝ կյանքի նկատմամբ դիրքորոշում»[30]:

Դեռևս XIX դ. կեսերին Մխիթարյաններին հաճախակի էին քննադատում ժամանակակից փիլիսոփայական տեսություններից հրաժարվելու և միջնադարյան փիլիսոփայական ավանդույթներին ու սկզբունքներին հետևելու համար: Ալ. Երիցյանը մեղադրում է նրանց, որ «Վենետիկի պատուելի հայրերը ոչ մի քայլ չեն արած ծանոթացնելու ազգիս՝ գերմանացի կամ ֆրանսիացի նորագոյն փիլիսոփայութեանը, բայց տուել են մեզ Կիկե-

---

29 *Թ. Թ ո մ ա ճ ա ն. Հուշեր և նիշեր Հ. Ալիշանի ներքին կեանքեն.– Ալիշանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1974, էջ 205:*

30 *Ա. Տ ե ր տ ե ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 61:*

րոնի, Սենեկայի և Պղատոնի հատուկտոր գրուածքները»[31]*: Մինչև 1882 թ. Վենետիկի Մխիթարյանները հրատարակել են 630 անուն կամ 832 հատոր գիրք, որից 63 անունը զուտ իմաստասիրական է կամ բարոյագիտական, սակայն դրանց մեջ չկա ժամանակակից հեղինակների որևէ գործ: Այդ հրատարակությունների մեջ կա նաև տրամաբանության երեք գիրք, որոնք, Երիցյանի բնութագրմամբ, շատ են հնացած. «Թողնում ենք բանասերներին գտնել, թե մեր օրերում որ աստիճանի նպատակահարմար է տրամաբանութեան մի դասագիրք, որ գրուած է Գեգելի ծնուելուց առաջ»*[32]*:*

Ալ. Երիցյանն, անկասկած, իրավացի է, երբ պահանջում է, որ Մխիթարյանները պատշաճ ուշադրություն դարձնեն ժամանակակից փիլիսոփայական տեսություններին: Սակայն Երիցյանն անիրավացի է նաև իր մեղադրանքների մեջ, որովհետև Մխիթարյաններից պահանջում է մի բան, որը նրանց ծրագրերից դուրս է և, գեռ ավելին, դեմ է իրենց աշխարհայեցությանը: Նախ, եթե մենք անընդունելի ենք համարում միջնադարյան փիլիսոփայությանը հատուկ հետադարձության սկզբունքը, համաձայն որի ճշմարիտ է այն ամենը, ինչը հին է, նույն տրամաբանությամբ էլ կարող ենք պնդել, որ ճշմարիտ չէ այն ամենը, ինչը գալիս է նոր փիլիսոփայությունից, քանի որ փիլիսոփայության մեջ չի գործում կումուլյատիվության սկզբունքը: Ի տարբերություն գիտության, փիլիսոփայության մեջ նոր տեսությունները կարող են ոչ միայն չօգտագործել նախորդ փիլիսոփայության ձեռքբերումները, այլև կարող են արմատապես մերժել դրանք: Համենայն դեպս մի բան պարզ է, որ եթե չլիներ Կանտը, չէր լինի նաև կանտականությունը, ի տարբերություն գիտության, որտեղ եթե չլիներ Նյուտոնը կամ Էյնշտեյնը, միևնույն է, վաղ թե ուշ կատարվելու էին նրանց հայտնագործությունները: Հետևաբար, յուրաքանչյուր փիլիսոփայական տեսություն ճշմարիտ է մասամբ, որպես իր դարաշրջանի և իր ազգային կեցության արտացոլում և ընդհանրացում: Ուրեմն, անկախ մեր դիրքորոշումներից, յուրաքանչյուր փիլիսոփայություն ունի գոյության իրավունք:

Մխիթարյանների փիլիսոփայությունը կրոնական է և նրանց մտածողության և աշխարհայեցողության վրա իշխողը արիստոտելականությունն է, որը գալիս է Մխիթար Սեբաստացուց: «Մխիթար աբբան փիլիսոփայության մեջ (բարոյական և քաղաքական) հետևել է Արիստոտելին»[33]*,– գրում է Հովհաննես Ալանը: Ընդ որում, մեր կարծիքով, իշխողը եղել է ոչ թե մաքուր արիստոտելականությունը, այլ արիստոտելականությունը հայրաբանական-ջատագովական և հատկապես՝ Թովմա Աքվինացու մեկնաբանությամբ:*

Մխիթարյանների և հատկապես Ալիշանի փիլիսոփայական աշխարհայեցության ձևավորման վրա իր ազդեցությունն է թողել նաև միջնադարյան հայ փիլիսոփայությունը, հատկապես՝ Դավիթ Անհաղթի, Ներսես

---

31 *Ա լ. Ե ր ի ց ե ա ն. Նշվ. աշխ., էջ 95:*

32 *Նույն տեղում:*

33 *Հ. Յ. Ա լ ա ն. Մխիթարեանք գրականութեան հանդէպ (1701–1901). Վենետիկ, 1902, էջ17:*

Շնորհալու, Հովհաննես Սարկավագի և այլոց փիլիսոփայական հայացքները: Նրանց փիլիսոփայական հիմնական սկզբունքներից մեկը հետադարձության սկզբունքն է, որն ասում է. «Որքան հին, այնքան իսկական, իսկ ինչքան իսկական, այնքան՝ ճշմարիտ»: Եվ քանի որ ամենահինը Աստվածաշունչն է, որն իր մեջ հավաքել է բոլոր ճշմարտությունները և մարդկությանը հաղորդակից է դարձրել աստվածային խոսքին և երանությանը, ուրեմն, պետք է վստահել միայն նրան: Ճիշտ է, «իմաստասերների մի ամբողջ դասակ», ընթացել է մարդկության «կեռմանաշատ»» ճանապարհներով, որպես «առաջնորդ և միջնորդ ռամիկ բազմության համար՝ գտնելու և ցույց տալու կյանքի ճանապարհը»: Սակայն ճշմարտության այդ որոնողները փոխանակ «հեռացնելու տգիտության ինքնածին բույսը», աճեցրեցին «մոլության կամավոր տունկը»: Եթե անգամ նրանք տեսնում էին որոնվող ճշմարտության «նշույլները», ապա ղրանց դեմ «բարբաջելով» նրանք ավելի դեպի «ստությունն էին դիմում», որի արդյունքում նրանք «ոչ իսկական ճշմարտությանը հասան և ոչ էլ կարողացան այն ճշտորեն արտաբերել»[34]: Ալիշանը ոչ թե մերժում է գիտական ճանաչողության հնարավորությունը, այլ՝ վիճարկում է դիտական ճշմարտությունների բարոյական արժեքը, այնպես, ինչպես իր ժամանակին գիտությունն ու արվեստները քննադատում էր Ժ.-Ժ. Ռուսոն:

Մարդկությանը հայտնի իմաստուններից և ոչ մեկը չկարողացավ համարձակորեն և ի լուր աշխարհի հայտարարել, թե ես բացահայտել եմ ճշմարտությունը և կարող եմ ցույց տալ ճշմարտության ճանապարհը, և դա միանգամայն բնական է, ասում է Ալիշանը, որովհետև փիլիսոփայությունը չկարողացավ հիպոթեզներից և կարծիքներից հեռուն գնալ... Այդ պատճառով էլ «Փիլիսոփաների, մոգերի և քրմերի բոլոր ճեմարաններն ու լսարանները... խորտակվում են և լռության ու արհամարհանքի են դատապարտվում»[35], որովհետև նրանցից յուրաքանչյուրը որոնում է ճշմարտությունը՝ չհավատալով այն գտնելու հնարավորությանը:

Որպես աստվածաբան-փիլիսոփա, Ալիշանը պաշտպանում է Տիեզերքի, Բնության և Մարդու արարչագործության տեսությունը: «Դու ալ, բնությունն ալ ստեղծված եք արարչեն»[36],– ասում է նա և զարմանում է, որ որոշ իմաստասերներ չեն ընդունում այս ճշմարտությունը: Որովհետև նրանք չեն կարողանում ըմբռնել, թե այս անսահման բնությունը ինչպե՞ս կարող է արարված լինել, մոռանալով, որ «այս ահեղ ընդարձակ բնությունն՝ որ տեսած և չտեսած տիեզերքդ կբովանդակե, կետ մ՚է ստեղծողին առջև», ինչպես որ «մարդս ալ կետ մ՚է բնության մեջ, բայց բնության տիրող կետն է»[37], քանի որ ստեղծված է Աստծո պատկերով և Աստծո նմանությամբ: Նա ստեղծված է որպես տեր և ոչ որպես բռնավոր, այդ պատճառով էլ նա բնության «մեկ մասին իշխանաբար կհրամայե՝ իրեն պիտո-

34 Ղ. Ա լ ի շ ա ն. Երկեր, էջ 312:
35 Նույն տեղում, էջ 314:
36 Նույն տեղում, էջ 205:
37 Նույն տեղում:

յիցը ծառայեցնելու, մեկ այլ մասին մտոք կ՝իշխե, անոնց օրենքները քննելով կամ վրանին զվարճանալով»[38]:

Ըստ Ալիշանի, Արարիչն աշխարհն ստեղծել է միմյանց հակադիր Լույսի ու Խավարի, Բարու և Չարի, Կյանքի ու Մահվան հակոտնյա ուժերից: Հակոտնյա տարրերից է ստեղծել նա նաև մարդուն. մի կողմից «տիեզերական փոշի», որի հիմքում ընկած է «Ոչինչը», թեկուզ և այնպիսի «Ոչինչը», որն իր մեջ կրում է «ինչ-որ բանի» վերածվելու հնարավորությունը, իսկ մյուս կողմից՝ Բանականություն և Ազատ կամք: Մարդկանց անհավանական է թվում, որ բնությունն արարչագործվել է «ոչնչից», ասում է Ալիշանը և դա այն պատճառով, որ դեռևս հեթանոս իմաստասերներն այն կարծիքին էին, թե «Ոչնչից ոչինչ չի առաջանում»: Նրանք մոռանում են, որ ինչն անիրականանալի է մարդու համար, հնարավոր է Աստծո համար և զարգացնելով Օդոստինոս Երանելու միտքը, թե «Աստված հենց այն պատճառով էլ Աստված է, որ ոչնչից ստեղծում է ամեն ինչ»[39], Ալիշանը գրում է. «Միայն Աստված է, որ կարող է աստվածային բաներ անել»[40]:

Այդ «Ոչինչը» մարդն ամբողջ կյանքում կրում է իր մեջ, որից և բխում է նրա անկատարությունը, որն արտահայտվում է նրա փոփոխականությամբ, ճանաչողության սահմանափակությամբ և առաքինության սլակասով: Ակայն, ինչպես հայրաբանության խոշոր ներկայացուցիչներից Թեոֆիլը, այնպես էլ Ալիշանը համոզված է, որ վիճակն այնքան էլ անհուսալի չէ, քանի որ մարդն «Ոչնչի» հետ մեկտեղ իր մեջ կրում է նաև աստվածային կայծ՝ բանականությունն ու ազատ կամքը, որոնց շնորհիվ նա ճիշտ ընտրություն է կատարելու, ճանաչելու է աստվածային օրենքները և ապրելու է համապատասխան այդ օրենքների:

Եթե մարդն արարչագործության արդյունք է, ապա ազգերը, ըստ Ալիշանի, արդյունք են իրենց բնության: Ազգերի և ժողովուրդների մասին խոսելիս նա ելնում է աշխարհագրական գետերմինիզմի սկզբունքներից: Այստեղ աստվածաբան–հոգևորականին փոխարինելու է դալիս դիտնական-փիլիսոփան: Նա երկնքից իջնում է երկիր... Նրա ուսուցիչներն արդեն ոչ թե միջնադարյան հայրաբանության ներկայացուցիչներն են կամ Աստվածաշունչն է, այլ՝ Հիպոկրատեսը, Հերոդոտոսը, Մոնտեսքյուն, Հեգելը, Բոկլը, Հ. Թենը և ուրիշներ, ովքեր մշակեցին աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը, այսինքն, ովքեր մշակեցին օբյեկտիվ գործոնների՝ աշխարհագրական միջավայրի, կլիմայի, ռելիեֆի ազդեցության մասին տեսությունները հասարակության ձևավորման և հետագա զարգացման վրա: «Յայտնի է ամենուն թե ինչ ազդեցութիւն ունին կլիմայք՝ տեղացեաց վրայ. ինչպես սաստիկ տաք կամ ցուրտ երկրի բնակիչք՝ տկար և ջլատեալ կ՝ըլլան. ինչպես բարեխառն կլիմայից բնակիչք՝ ավելի բարեկեցիկք, բարեբնոյթք և կիրթք. չափավոր ցրտութեան տակ եղողք՝ աւելի ժիր կ՝ըլլան. չափաւոր տաքութեան տակ եղողքն այլ՝ աւելի զուարթ և զբոսասեր, ինչպես գաղղիացին, միդամածք երկրի բնակիչք՝ իրենց վարուց վրայ

38 Նույն տեղում, էջ 206:

39 Г. Г. Майоров. Формирование средневековой философии. М., 1979, с. 70.

40 Ղ. Ալիշան. Երկեր, էջ 321:

այլ միգային քող մը կ՚երեւցնեն, մելամաղձ եւ ծանրաբարոյ կ՚ըլլան, ինչպես Անգլիացին և Իռլանդացին: Այսպես եւ գուցե այլ աւելի, երկրին կազմուածքն եւ դիրքն ունին տպաւորութիւն՝ ի վերայ բնակչացն»[41],– գրում է Ալիշանը:

Բնակիչների վրա ազդում է ոչ միայն տվյալ երկրի կլիման, այլև՝ երկրի կառուցվածքն ու դիրքը: Աշխարհագրական միջավայրի տարբերություններով է պայմանավորված նաև գործունեության բնագավառների, կենցաղի, սովորույթների, ավանդույթների, ինչպես նաև ազգային հավատալիքների տարբերությունները: Արվեստների ներշնչողը նույնպես հայրենի բնությունն է. «Յունաց և Իտալացվոց այնչափ գերազանցութիւն՝ ի գեղարուեստս՝ առաջին վարպետ եղած է իրենց հայրենի երկրին բնութիւնն. բարեխառն կլիմայն, դալար բուսաբերութիւնն, զանազանութիւն կամ ելեւէջք դրից, և ծովն»[42]: Ալիշանը ծովը համեմատում է «այն ծեր և ալեզարդ մեծ վարժապետի հետ», որն իր «ահեղ ձայներեն աւելի՝ իր կերպուկերպ ծփանոքն» զարմանալի ազդեցություն է ունեցել և այժմ էլ ունի հույնի, անգլիացու, վենետիկցու և մյուս ազգերի վրա, ում երկիրը «բաղդաւոր եղեր է» իր սահմանների մի մասով սահմանակից լինելով ծովին:

Հայ ժողովուրդն արդյունքն է Հայկական լեռնաշխարհի. հայի կազմախոսությունն ու հոգեգծերը ձևավորվել են Հայաստանի բնության ու կլիմայի ազդեցությամբ: Դրանցով է պայմանավորված նաև նրա էության հակասականությունը. «Երկու հակադեմ կլիմայք կ՚երևին մեր երկրին մեջ. սաստիկ ցրտութիւն եւ սաստիկ տաքութիւն: Ինչպե՞ս բնակելու է ասանկ երկրի վրայ: ... Մեր հարքն ու մեր եղբարքն անգամ, շատ տեղ գետնի վրայ չէին բնակեր ուրիշ աշխարհաց բնակչաց նման, գոնե տարւոյն երկու ծայրահեղ եղանակաց ատեն, այլ անկե վար կամ անկե վեր, այսինքն, ձմեռն՝ երկրին երեսաց տակ, կես գետնափոր տանց մեջ, նման իմն հողաթմբիր կենդանեաց. իսկ ամառն՝ այլ աւելի վայելչապես, երկրիս սովորական երեսեն վեր, օդասահման կենդանեաց եւ թռչնոց հետ. կամ լերանց եւ սարից վրայ, կամ ծառոց եւ ձեռակերտ բարձբավանդակաց վրայ...»[43]: Բնական այդ գործոնները եղան հայ ժողովրդի ձևավորման հիմնական տարրերը և ոչ թե կրոնական պատկանելությունը, ինչպես մտածում էին որոշ մտածողներ նույնիսկ XIX դ. երկրորդ կեսերին... Ջնայած հավատալիքների, սովորույթների և հոգևոր այլ գործոնների կարևորությանը, ըստ Ալիշանի, այնուամենայնիվ, առաջնայինը դրանք չեն: «Երբ Հայկայ և Վահագնի օրերուն խորհրդակատար քրմապետաց տեղ՝ փոխանակեցին խաչապսակք քահանայապետք, մեհենաց վրայ եկեղեցիներ կանգնեցին», ազգն իր բնույթը չփոխեց, մնաց նույն ազգը, քանի որ «անոնց չորս դին և դուրսը նոյնպես մնաց, բնութիւնն իր կերպարանքը չփոխեց, ազգն իր հանդեսները չփոխեց»[44],– գրում է Ալիշանը: Այսինքն, ազգային բնութագիրը պայմանավորված է ոչ թե կրոնական հավատալիքներով, այլ՝ աշխարհագրական այն միջավայրով, որի վրա ձևավորվել է, ապ-

41 Հ. Ղ. Մ. Ա լ ի շ ա ն. Յուշիկք..., հ. Ա, էջ 9-10:
42 Նույն տեղում, էջ 10:
43 Նույն տեղում, էջ 270:
44 Նույն տեղում, էջ 294:

րել, ստեղծադործել ու մաքառել է տվյալ ժողովուրդը: «Հայաստան ընդիմակներու երկիր մրն է գերազանց աստիճանի, որ քիչ ազդեցութիւն չեն ըներ իր ընակչաց բարոյիցը վրայ»,– ասում է Ալիշանը Մուրադյան վարժարանի պարգևաբաշխության օրը աշակերտներին ուղղված իր «Ճառ»-ի մեջ[45]: Օտարը կարող է նաև չսիրել «ընդդիմակներու» այդ երկիրը, մինչդեռ այն միշտ էլ սիրելի է իր ժողովրդի համար, որովհետև հայրենիքը սիրելի գարձնողը բնությունը չէ, այլ հայրենիքն է, որ սիրելի է գարձնում բնությունը. «Ա՜հ, երբ սիրելի կ՚ըլլան հայրենիք, ամեն եղանակներն ալ գեղեցիկ կ՚ըլլան, և վայրենագոյն բնութիւնն անդամ կը քաղցրանայ բարեկիրթ սրտի մը»[46]:

Եվրոպայում սկիզբ առած ազգային–ազատագրական շարժումները արթնացրեցին նաև Արևելքը: Ազգային զարթոնք և մշակութային վերածնունդ ապրեց նաև հայ ժողովուրդը: Մխիթարյանները, լինելով եվրոպական իրադարձությունների կիզակետում, չէին կարող չարձագանքել այդ շարժումներին: Այդ իրադարձությունները խորը ազդեցություն ունեցան երիտասարդ Ալիշանի հայացքների ձևավորման վրա: Պատահական չէ, որ Վենետիկի հեղափոխության օրերին ծնվեցին նրա ամենավառ, մարտակոչ հիշեցնող բանաստեղծությունները, որոնք հետագայում զետեղվեցին նրա «Նուագների» «Հայրունի» հատորի մեջ, որի «Առաջաբանում» Կյուրեղ Քիպարյանը հետագայում գրում է, որ Ալիշանի անունը երկար ժամանակ «եղած է մարմնացում և խորհրդանիշ հայրենիքի սիրոյն և ազգային արժեքներու»[47]:

Ազգի հիմնական բնութագրիչները Ալիշանը համարում է ոչ թե կրոնը, այլ լեզուն և սովորույթները: Իսկ քանի որ սովորույթները կարող են նաև փոփոխվել ժամանակի ընթացքում, ուրեմն, ազգի հիմնական բնութագրիչը մնում է լեզուն: Ըստ նրա, ազգի մասին առաջին պատկերացումները մարդն ստանում է ճանաչելով իրեն: Նա տեսնում է, որ ինքը որպես մարդ «ամեն մարդու հավասարակից է, բայց ամենքն ալ իրմե զատ-զատ մարդիկ են»: Այդ նույն տրամաբանությամբ էլ նա հանգում է այն եզրակացությանը, որ մարդկային բազմության մեջ կան բազմաթիվ մարդիկ, «որք նման են իրեն այն ամեն բաներով՝ որով որ ուրիշներու չեն նմանիր»[48]: Հետևաբար, ըստ Ալիշանի, ազգը «միություն է այնքան մարդկանց, որ մեկ նահապետե մը առաջ եկած են, մեկ հայրենի լեզու ունին, նման բնավորություն ունին և շատ հեղ՝ նույն կրոնք, նույն օրենք, նույն վիճակ»[49]: Իհարկե, ցանկալի կլիներ, եթե ազգը կազմող անդամները ունենային նաև նույն կրոնը, նույն օրենքներն ու նույն վիճակը: Սակայն արտաքին պատճառներով պայմանավորված նմանատիպ տարբերությունները չպետք է խանգարեն մեր ազգային միասնությանը, որի առաջին պայմանն ազգասիրությունն է: Այդ երևույթի մասին հատկապես շատ է խոս-

---

45 Հ. Ղ. Ա լ ի շ ա ն. Ուսումն հայրենեաց.– «Բազմավեպ», 1861, էջ 312:

46 Նույն տեղում, էջ 313:

47 Կ. Ք ի պ ա ր յ ա ն. Առաջաբան.– Ղ. Ա լ ի շ ա ն. Հայրունի (հատվածներ). Վենետիկ, 1944, էջ 7:

48 Հ. Ղ. Մ. Ա լ ի շ ա ն. Յուշիկք..., էջ 2:

49 Ղ. Ա լ ի շ ա ն. Երկեր, էջ 177:

վում հիմա՝ մեր օրագրերի մեջ և «բերնե բերան անցնելով քանի մը տարիե ի վեր, մոգական կամ ալքիմիական բառ մը դառնալ կսկսի. շատ տեղերե ալ նույն ձայնը ելլելով, երբեմն լսողին գլխուն չփոթություն ալ բերելու պատճառ կըլլա»,– ասում է Ալիշանը[50]:

Ազգասիրությունը երկու բառերից է կազմված՝ ազգ և սեր, որտեղ ազգը հանդես է գալիս որպես այն կավը, որից կերտվել-ստեղծվել է ազգը և սերը՝ որպես կրակ, որով թրծվել է հայ կավից կերտված դլուխգործոցը, որպեսզի լինի ավելի ամուր և ավելի կայուն: Հետագայում Գարեգին Նժդեհը Ալիշանի ազգասիրությունն ուներ որպես ելակետ, երբ ստեղծեց ցեղակրոնությունը՝ որպես տեսություն և որպես շարժում (ցեղ-ազգ և կրոն-սեր): Նույն կավից պատրաստված մարդկանց պարտքն է, որ սիրեն իրար: Այդ սերը Ազգասիրությունն է, ասում է Ալիշանը և միաժամանակ նաև դժգոհում է, որ կան բազմաթիվ մարդիկ, ովքեր վախենում են նույնիսկ այդ բառի կիրառումից: Նրանց թվում է, որ ազգասիրությունը դեմ է մարդասիրությանը: Այս տեսակետը դալիս է «Շնական ըսված փիլիսոփայութենե»,– ասում է Ալիշանը: Նրանց մասին է, որ նա դրում է, թե սուտ է այն փիլիսոփան, որ «ազգասիրությունը մարդասիրության դեմ կկարծե, որ հայրենիքը հերձված կսեպե երկրես, և կըսե. բոլոր երկիրս ալ հայրենիք է լավ մարդու, ինչպես թռչունին՝ բոլոր երկինքն և ձկան՝ բոլոր ծովը»[51]: Մինչդեռ, ինչպես մարդասիրությունը, այնպես էլ ազգասիրությունը բնական «պատվեր»-ներ են և նրանց «պարտքը» դնողը ամենևին էլ փիլիսոփաները չեն, բնությունն է, միայն այն տարբերությամբ, որ եթե մարդասիրությունն «ընդհանուը պատվեր» է, ապա «ազգասիրությունը մասնավոր պատվեր է»: Եթե «մարդասիրությունը մեզի կսորվեցնե զամեն մարդիկ սիրել, վասնզի մեզի նման են», ապա «ազգասիրությունը զազգայինները ավելի սիրել կսորվեցնե, վասնզի ավելի նման են մեզի»[52]: Հետևաբար, ազգասիրությունը ոչ միայն չի հակադրվում մարդասիրությանը, այլ՝ ավելի է հաստատում այն, որովհետև «իր ազգը չսիրողը հավիտյան մարդասեր չըլլար», քանի որ, եթե «կրակը մոտինները չտաքցներ, հեռվինները ինչպե՞ս կտաքցնե»[53], ասում է Ալիշանը:

Ալիշանը երազում էր իր ազգն ու հայրենիքը տեսնել «կատարյալ ու նախանձելի»: Նա երազում էր այն օրվա մասին, երբ կկարողանար ասել. «Ասիկա մեր հայրենական կալուածն է, զոր սեփական օրինոք և քաղաքավարութեամբ պահեր են նախնիքս իր հին սահմանաց մեջ, ՝ի միջի ուրիշ սահմանաց և ազգաց»[54]: Աշխարհագրական այդ տարածքները, ժամանակի ընթացքում, դառնում են հայրենիք, ոչ այն պատճառով, որ այնտեղ ապրում են և մեծամասնություն են կազմում այս կամ այն ազգի ներկայացուցիչները: Նման բնութագրումը հայությանը չի վերաբերում, որովհետև, ինչպես նկատում է Ալիշանը, դեռևս քրիստոնեության ընդունման ժամանակներից, հայ ժողովուրդը զանգվածաբար հեռացել է իր պատմա-

50 Նույն տեղում, էջ 176:
51 Նույն տեղում, էջ 177:
52 Նույն տեղում, էջ 179:
53 Նույն տեղում, էջ 177:
54 Հ. Ղ. Մ. Ա լ ի շ ա ն. Յուշիկք..., էջ 12:

կան հայրենիքից և անհիշելի ժամանակներից հայ ազգը «չատ ընդարձակ և անհուն երկրի երես սփռված կու տեսնեմք», հետևաբար, մեր հայրենիքն այնտեղ է, որտեղ մեր ազգակիցների «ծնարանքն և քնարանքն են», որտեղ կայացել է ազգի բարոյական կյանքը, որտեղ աշխատել, արարել և հող են դարձել ազգի անդամները: Հետևաբար, «աւելի կերպով մը հոն են հայրենիք՝ ուր որ մեր արենակիցք և լեզուակիցք գործեր են»[55], և իրենց գործունեությամբ մշակել, վերավոխել և վերակառուցել են այն իրենց հոգևոր-բարոյական առանձնահատկություններին համապատասխան: Հետեարար, «Ով որ անտարբեր է դէպ ի հայրենիքը, ան իրաւունք չունի ընկերութեան մէջ ապրիլ, դուրս պետք է ելել յազգես ի բնաւ իսկ մարդկանէ, յանտառս յանապատս ի սառնամանիս դիցե զբոյն իւր»[56],— գրում է Ալիշանը:

Յուրաքանչյուր ազգ իր երկրի, իր բնության արդյունքն է, հետևաբար, անկախ երկրի ճակատագրից, այն միշտ էլ սիրելի է իր ժողովրդի համար: Ինչպես որ մեր ծնողներին սիրելի դարձնողը նրանց հարստությունը կամ վառքը չէ, այնպես էլ հայրենիքն ու ազգը սիրելի դարձնողը նրա բնությունը կամ ճակատագիրը չէ, ասում է Ալիշանը: Ի՞նչ են ասում այն մարդուն, որը չի սիրում իր ծնողներին՝ պատճառ բերելով նրանց աղքատությունը կամ խեղճությունը, կամ հիվանդությունը: «Մարդ չէ, գազան է կրսենք»,— ասում է Ալիշանը: Նրա կարծիքով, «Ազգը չսիրելը, իր ծնողները չսիրելեն վար չմնար», որովհետև եթե մենք սիրում ենք մեր ծնողներին, որոնք կյանք են տվել մեզ, ուրեմն, մենք պարտավոր ենք սիրել մեր ազգին, քանի որ նա է ծնողը մեր ծնողների. «Մեր ազգն է մեր հայրերուն հայրը. Մեր ազգն է զմեզ մեզի տվողը», հետևաբար անիրավ է իր ազգը չսիրողը և ավելի անիրավ է «հայ մը թե որ ազգը հայ ըլլալուն համար չսիրեր»[57]:

Իմաստուններից մեկն ասել է. «Ըստ երևույթին ամենադժբախտ ազգերը ավելի են սիրում իրենց հայրենիքը»: Այս բանաձևը ընդունելի է Ալիշանի համար. նա մեծ սիրով է սիրում իր ժողովրդին և իր հայրենիքը և այդ նույն սերը քարոզում է բոլորին, երբեք չչափազանցելով իր սիրո մեջ, որովհետև հայրենասիրության և ազգասիրության մեջ չափազանցումը կարող է վնասել հայրենիքի շահերին: Պատահական չէ, որ նա դեռևս 1848 թ. իր հոդվածներից մեկում գրում է. «Ու իրը հայրենասիրությամբ եթե վնասե հայրենյաց թող կապեսցեն արկցին ղիս ի ծծնբահոտ վիհս Մասեաց, անգ քավեցից զառավել սիրոյն իմոյ մեղանս»[58]:

Ազգասիրությունը և հայրենասիրությունը պետք է լինեն արդարացի, որի համար անհրաժեշտ է, որ «սրբենք մտաց աչվնիս, որ չլլա թե տգիտությամբ և վատությամբ մթնած՝ չտեսնե անոր դեղեցիկ ձիրքերն ալ, կամ չլլա, որ շլացությամբ, որ է չափազանց տեսություն, տեսածներնուս կերպարանքն այլայլե և սևն ալ ճերմակ տեսնենք»[59]: Այս երկու տեսակ

55 Նույն տեղում, էջ 6:
56 «Բազմավեպ», 1843, էջ 181:
57 Ղ. Ա լ ի շ ա ն. Երկեր, էջ 179, 180:
58 Նույն տեղում, էջ 180:
59 Նույն տեղում, էջ 170:

մտածողներն էլ կարող են լինել, ասում է Ալիշանը, նրանք կան նաև մեր ազգի մեջ և, կարելի է ասել, որ երկուսն էլ հավասարապես վտանգավոր են: Եթե նրանցից առաջինները «Հայու ազգը ցած, անարգ, սինլքոր, կոշտ, սև բան մը կսեպեն», որն սպառել է իրեն և պատմության մեջ այլևս չունի որևէ կատարելիք գործ, ապա երկրորդները «տեսակ մը հպարտ և համառ ազգասիրությամբ չեն ուզեր, որ մեկ կերպով մը ազգին դիպչվի, ազգին վրա արատ մը գրվի, իբրև թե ազգը սիրելը անոր պակասություններն ալ պաշտել ըսել է, մեկեն ազգը պաշտպանենք ըսելով՝ անոր պակասություններն ալ կպաշտպանեն, առանց իմանալու, կամ իմանալով»[60]: Ալիշանն ըմբռնում է այս երկու մոտեցումների վտանգավորությունը և եզրակացնում, որ եթե իսկապես խելացիություն է «ազգին պակասությունը պարտկել», ապա պակասությունը չճանաչելը «մեծ սխալություն է», քանի որ առանց ազգի թերությունները ու պակասությունները ճանաչելու, հնարավոր չէ նրան վերափոխելը և կատարելագործելը: Նա համոզված է, որ ինչպես «բուն զմարդն մարդ ընողն է ինքզինքը ճանչնալը», այնպես էլ ազգին ազգ դարձնողը պետք է լինի ազգի ինքնաճանաչումը, որն այլ բան չէ, եթե ոչ ազգի պատմության՝ նրա ծագման, պայքարի, մաքառումի և գոյատևման պատմության իմացությունը: Ազգասիրությունը շատ լավ բան է, սակայն «ճշմարթութենե դուրս չելելրն ամենեն լավն է և ազգասիրությունեն ալ դուրս չէ»[61],– ասում է Ալիշանը և իր միտքն ավելի համոզիչ և ազդեցիկ դարձնելու նպատակով բերում է Խիկար իմաստունի միտքը, թե «Ազգին վրա վոչի մը չնստեցնել ուզելն՝ ազգը քարկոծելու վտանգի մեջ ձգել է»[62], որովհետև նման մոտեցման դեպքում, գիտակցաբար թե անգիտակցաբար մենք փակում ենք մեր աչքերը գոյություն ունեցող թերությունների ու պակասությունների հանդեպ, հնարավորություն տալով նրանց ավելի խորանալու: Պակասություններ ունեն բոլոր ազգերը, հետևաբար «մեծ անխելքություն է» պակասությունները չճանաչելը, որը հնարավորություն կտա ժամանակին ուղղելու դրանք:

Եթե որևէ հայ գտնում է, որ հայ ազգը զարմանալի կատարյալ, գեղեցիկ սովորույթներով զարդարված պետք է տեսնենք, բնական է, որ յուրաքանչյուր մարդ կարող է այդպես մտածել իր ազգի մասին: Բայց մենք գիտենք, որ յուրաքանչյուր ազգ իր գեղեցիկ և կատարյալ սովորությունների կողքին ունի նաև էական թերություններ ու պակասություններ: Ուրեմն, նույն ձևով էլ, եթե անգամ ոչ մենք, ապա ուրիշները տեսնում են մեր թերություններն ու պակասությունները, հետևաբար չպետք է հրաժարվել դրանցից, մանավանդ որ, հայ ժողովրդի թերություններն ու պակասությունները արդյունք են պետականության և ինքնուրույնության կորստի և ասիական վայրագ ժողովուրդների տիրապետության, հետևաբար շատ են սխալվում նրանք, ովքեր «որ ազգը կուզեն շարժել հանդիմանող, կծու ձայնով, կկարծեն, թե փոսը ընկած էշ մը կվերցնեն հրելով, մշտելով, կանչվռտելով, հայհոյելով, այս բանս շարժելու տեղ ավելի կջլա-

60 Նույն տեղում:
61 Նույն տեղում, էջ 170:
62 Նույն տեղում, էջ 171:

աև, կկոտրե ուժը, արդեն հիվանդ մարմինը ավելի կվատուժցնե»[63],– ասում է Ալիշանը:

Եթե վնասակար է «ազգը միշտ վար զաբնելը», նրան խարանելը, ապա օգտակար չէ նաև ազգը «միշտ գովելն ու գովելի ցուցնելն», քանի որ, եթե առաջին դեպքում կվատվի, կկոտրվի ազգը, ապա անընդհատ գովելը «սիրտը կուռցնեն, միտքը կկուրացնեն, սնապարծ ազգասեր մը կընեն, օդու մեջ պարող մը, որ հաստատություն չունի »[64],– ասում է Ալիշանը: Իհարկե, ազգը արթնացնելու և բարձրացնելու համար միանգամայն կարևոր է սիրտ տալը, ոգևորելը, «հուսո և գովության» խոսքեր ասելը, սակայն չի կարելի գուրս գալ ճշմարտության շրջանակներից և նախքան մեր ազգը «կատարյալ կամ առավելյալ» ներկայացնելը, անհրաժեշտ է պարզել, թե հատկապես ինչը կարող է «պաշծանաց» աղբյուր հանդիսանալ քաղաքական զորությու՞նը, գիտությունների զարդացու՞մը, երևելի գործերի համբա՞վն ու փառքը, հարցնում է Ալիշանը և պատասխանում է, որ «Դժբախտաբար ասոնցմե խիստ քչերը կտեսնենք հիմա»[65]: Ինչի՞ վրա է «պարծենալիքնիս», եթե անցյալի վրա է, ապա անհրաժեշտ է, որ անցյալը ներկայից «զանազանենք», ու «ըսենք, թե ունեինք, թե չէ ունինք, քանի որ ունեցածը հիմք չէ ասելու համար, որ ունենք»: Մեր պապերի մոտ «ստակով լեցուն» կաբասները մեզ չեն մխիթարում, «մեր աննման դյուցազունք և քաջերն և երևելի մարդիկը չեն կրնար մեր գերության և խեղճության վիճակը մեզի մոռցնել», քանի որ «բան ունենալը պարծելի չէ, հապա բանեցնելն և օգտակար ընելն»: Սնդուկներով սուր և պատերից հրացաններ կախված ունենալը գեռևս ոչինչ չի նշանակում, եթե սնդուկի մեջ և պատից կախված լինելու պատճառով «ճանճ մ՛ ալ չես հալածած»[66], գրում է Ալիշանը: Արդարացի է նրա պահանջը, որ գենք ունենալը անհրաժեշտ է «գործածելով ցուցնենք», ինչպես արեցին Ավարայրի հերոսները, ինչպես արեցին Վենետիկի քաջ ապստամբները, հակառակ դեպքում ի՞նչ տարբերություն չունենալու և ունեցածը չօգտագործելու մեջ:

Հաճախ սեփական ազգային թերությունների և պակասությունների մասին խոսելիս մարդիկ կանգ են առնում ուրիշ ազգերի թերությունների և պակասությունների վրա: Նման մոտեցումը նույնպես վտանգավոր է և վնասակար, ասում է Ալիշանը: Նման մտածողները, որոնց Ալիշանը բնութագրում է որպես «կարծեցյալ ազգասերներ», «չեն կրնար հայու ազգը գովել կամ պաշտպանել, ինչվան որ կամ հոռոմը, կամ ասորին և կամ հրեայն վար չգարնեն»[67], պահանջում է, որ նախ «ցուցընենք» մեր ձիրքերը, մեր առավելությունները և հետո միայն «սկսենք (թե որ կվայելե) մեր քովինները դատել»: Քննադատելով նման մոտեցումները, Ալիշանն իրավացիորեն նկատում է, որ «ուրիշի պակասությունը մեզի առավելություն մը չտար», հետևաբար, միանգամայն սխալ է, երբ «զհայը գովելու կամ պաշտպանելու ատեն հոռոմ մը, կամ հրեա մը, ասորի մը դիմացնին լու

63 Նույն տեղում, էջ 170–171:
64 Նույն տեղում:
65 Նույն տեղում:
66 Նույն տեղում, էջ 172:
67 Նույն տեղում:

մը կերևնա»: Արդարությունը պահանջում է. «թե որ հասակդ չափել կուզես, կանգունը վրադ դիր, քովինիդ վրա մի դիր», իսկ եթե ուզում ես երկուսիդ հասակն էլ չափել, ապա երկուսիդ համար էլ միևնույն «կանգունը բանեցուր»[68]:

Անկասկած, իրավացի է Բարսեղ Սարդսյանը, որ «Ալիշանը ազգային բանաստեղծ է, գրիչ է, բայց ոչ գործիչ՝ անոր դեպ ի քաղաքային անկախութեանը ձգտող շարժմանն»: Դա Սարդսյանը բացատրում է նրանով, որ Ալիշանը Վենետիկ գնալուց հետո այլևս «առիթ ունեցած չէ Արեւելք դառնալու, ժողովրդեան հետ շփուելու, անոր վիճակը մոտեն ուսումնասիրելու և քաղաքային խնդիրներուն մասնակցելու ուղղակի»[69]: Սակայն, դա հիմք չի տալիս ենթադրելու, որ Ալիշանին չեն հուզել հասարակական-քաղաքական խնդիրները, որ նա անտարբեր է հայրենիքում կատարվող իրադարձությունների հանդեպ: Մենք համակարծիք չենք նաև Սարդսյանի այն տեսակետի հետ, որ Ալիշանի նշանաբանը հայրենիքն ու ազգը սոսկ գրականությամբ և «կենցաղօգուտ» գիտություններով արթնացնելն է և Ալիշանին որպես «խաղաղական» բնութագրումը:

Ալիշանի հասարակական-քաղաքական հայացքները ձևավորվեցին 1848–1850-ական թվականներին Վենետիկի հեղափոխության ազդեցությամբ: Պատահական չէ, որ հենց այս տարիներին Ալիշանը հնչեցրեց իր ամենավառ և մռնչացող քնարը: Ադրիականի ալիքների վրա որոտում էին ռումբերը: Դուքսերից մինչև աղքատ ձկնորսները սուր և հրացան ձեռքերին գնում էին ռազմադաշտ, որտեղ որոշվում էր Իտալիայի ճակատագիրը: Նրանց շուրթերից հնչում էր խրոխտ մարտերգը. «Օ՜ն քաջազունք Իտալիո, ի սեր հայրենյաց, վազենք ի մահ կամ ի յաղթանակ»[70]: Երիտասարդ Ալիշանի միտքն օրորվում էր «այս մարտի երդերու որոտընդոստ բոմբիւններուն մէջ» և «իր տարաբախտ հայրենիքի մեղրաշուրթ երգչի» դյուրավառ հոգին չէր կարող չերգել իր երկրի ավերակները, իր դյուցազուններին, իր հայրենիքի երբեմնի փառքը, նրա ազատությունը: 1849 թ. Վենետիկի հերոսամարտի թարմ տպավորության ներքո Ալիշանը գրեց «Օ՜ն անդր յառաջ»-ը, որը ազատության ու պայքարի յուրատեսակ կոչ է: Ազատամարտի թմբուկն է որոտում՝ «Բա՜մ» և «Հայրենավրեժ հայկազուները» նետվում են մարտի. սա վերջին պատերազմն է գուցե, ազատության պատերազմը, որից հետո Արարատի գագաթին հավերժորեն ծփալու է Նահապետի պաշտելի եռագույնը... Ավետիք Իսահակյանի հետ ունեցած իր զրույցի ընթացքում Ալիշանն ասում է. «Իհարկե հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թաթարական լուծը, ինչպես առանց Եվրոպայի չպիտի կարողանային ազատվել ո՜չ Հունաստանը և ո՜չ Բուլղարիան: Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել է քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա»[71]: Ալիշանը նման մտածողութ-

68 Նույն տեղում, էջ 173:

69 Հ. Բ ա ր ս ե ղ վ. Ս ա ր դ ս ե ա ն. Երկհարիւրամեայ գրական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ. Վենետիկ, 1905, էջ 330:

70 Ս. Ե ր ե մ ե ա ն. Ազգային դեմքեր, 3-րդ շարք. Վենետիկ, 1913, էջ 190:

71 Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. Ղևոնդ Ալիշան.– Ալիշանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1979, էջ 221–222:

յունը համարում է «մեծադույն և բազմաղետ» սխալ և որպես հիմնավորում բերում է Թերզյան հայ կարդինալի օրինակը, որը կոտորածների ժամանակ գնում է Հռոմ, «ընկնում է սրբազան պապի ոտները, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որ ջարդարար թուրքի ձեռքը բռնեն»: Սրբազան պապն ասում է. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»[72]: Այս դատողության շարունակությունն է հանդիսանում «Շիրակ» աշխատության մեջ Ալիշանի արտահայտած այն միտքը, որ եվրոպական քրիստոնյա պետությունների թույլտվությամբ և հրահանգով Ասիայի բարբարոս խաժամուժը նվաճեց և ավերեց հայոց աշխարհը, ինչպես նաև Անի քաղաքը[73]: Եվրոպական պետությունները ոչ միայն չօգնեցին և չպաշտպանեցին իրենց ապավինող հայ ժողովրդին, այլև պատեհ առիթ դտան շահագործելու հայի արյունը և դա իրականացավ, որովհետև «Եվրոպայու «բարոյականը ավերված է». բարոյապես սնանկացած է նա. նախնական մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անդամ: Նա ստախոս է, շահամոլ է և եսական:

Պետք է ընդմիշտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և դարշանքով երես շրջել[74]»,– ասել է Ալիշանը Իսահակյանին: Դա էր պատճառը, որ իր կյանքի ծաղկուն հասակում ազատագրական շարժումներով ոգևորված, «ի զե՛ն ի վրէ՛ժ» կոչող Նահապետը իր կյանքի ձմեռնամուտին, պահ մը կը վարանի եղելութեանց վրայ, և յեղափոխութեան (հայ հեղափոխության – Յու. Հ.) պատճառը իր երգերու մեջ փնտռելու խղճահարութիւնը կ՚ունենայ»[75] և հուսահատված իր ամբողջ հույսը դրել էր Բարձրյալի վրա... Ժամերգությունը դեռևս չսկսված՝ եկեղեցու կիսախավար որևէ անկյունում նա ծունկի էր գալիս, ճերմակ մաղերը հատակին փռած և կիսաձայն մրմնջում էր իր ազոթքը առ Աստված և առ հայ ժողովուրդը...

ФИЛОСОФИЯ ЖИЗНИ ГЕВОНДА АЛИШАНА
(К 100-летию со дня смерти)

ЮРИЙ ОВАКАНЯН

Резюме

Наследие Гевонда Алишана как поэта, историографа, географа, педагога и богослова изучали С. Еремян, Б. Саргсян, А. Чопанян, А. Чемчемян, А. Тертерян, С. Штикян и др. Однако Алишан-философ и моралист все еще остается неизвестным. Даже крупные историки философии А. Габриелян и В. Чалоян не смогли правильно оценить реальное значение мхитаристов и Алишана в армянской культуре и, в частности, истории философии. Настоящая статья яв-

72 Նույն տեղում:
73 Ղ. Ա լ ի շ ա ն. Երկեր, էջ 185:
74 Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 222:
75 Ս. Ե ր ե մ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 194:

ляется первым опытом исследования философских взглядов Алишана. Философия Алишана весьма самобытна и противоречива. С одной стороны это продолжение традиций средневековой философии, с другой — резкий переход к теории географического детерминизма и к анализу национального бытия. С одной стороны Алишан признает сотворение Вселенной и Человека, с другой — объясняет возникновение наций, особенности их духовных качеств теорией географического детерминизма. Опорой его философии является любовь к нации, которая тоже — „естественный завет" и не заложена философами. Нацию и родину нужно любить, но нельзя утрировать эту любовь. „Не допустимо не только постоянно ронять нацию, клеймить ее, но и все время расхваливать и петь дифирамбы ей, поскольку, если в первом случае нация обессиливается, то во втором случае ослепляется разум и появляется тщеславный патриот, висящий в воздухе и не имеющим опоры", — говорит Алишан.

PHILOSOPHY OF LIFE OF GHEVOND ALISHAN
(To the centenary of his death)

YURI HOVAKANYAN

S u m m a r y

Ghevond Alishan is well known in Armenian society as a poet, historiographer, geographer, teacher, theologist and clergyman thanks to works by S. Yeremian, B. Sargsian, A. Chobanian, A. Tchemtchemian, A. Terterian, S. Shtikian and others. Nevertheless Alishan philosopher and moralist still remains unknown. Even prominent historians of philosophy H. Gabrielian and V. Chaloyan couldn't truly estimate the real significance of the Mkhitarians and Alishan in Armenian culture, and, particularly in the history of philosophy. This article is the first experience of investigation of Alishan's philosophic views. Alishan's philosophy is quite original and contradictory. On the one hand this is a continuation of traditions of medieval philosophy. On the other hand it is an abrupt transition to the theory of geographical determinism and analysis of national subsistence. On the one hand Alishan accepts the Creation of the Universe and Man, on the other hand explains the beginning of nations, the features of their spirits by the theory of geographical determinism. The foundation of his philosophy is love to the nation, which is also a "natural Testament" and isn't set by philosophers. One must love nation and fatherland, but one can't exaggerate this love, it isn't allowed not only to shame your nation and also always to praise it, because if in the first case the nation weakens, in the second case the mind goes blind, and appears a conceited patriot, hanging in the air, having no foundation, says Alishan.